ՆՈՐ-ԴԱՐ

№ 178 ՏԱՍՆԵՒՉԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ, 3 Հոկտեմբերի 1898 Շաբաթ, 3 Հոկտեմբերի ՏԱՍՆԵՒՉԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 178

Տարեկան՝ 10 րուբլի, վեց ամիսը 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Թիֆլիսում ամիսը՝ 1 ր., համարը 5 կ.
աժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ"
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar"

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին՝ 2 կ., րեկլամների համար՝ կրկնապատիկ

«Նոր-Դար»-ի խմբագրատունը գտնւում է Բօլշայա-Վ.ատաւօդնայա փ. Ա եւ Գ քաղաքամասերի սահմանում, Աւլաբովի տանը, № 20, Սալեօրնի զօրանոցի դիմացը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Թիւրքերը հեռանում են Կրետէից։

Քրոնիկոն.—Լուրեր։

Մեզ գրում են. — Արմաւիրից, Շամախուց։

Պրոֆեսոր Միլլերի գլխաւոր գործերը հայոց լեզուի մասին։

Կեղծաւորութիւնը հրապարակի վրայ։

Մամուլի շուրջը։

Քաղաքական. — Դրայֆուսի գործը։ Կրետէի խնդիրը։ Անիշխանականները։ Թիւրքիա։ Չինաստան։

Խառն լուրեր։

Հեռագրներ։

«Նոր-Դար»-ի պատասխաններ։

Տեղեկատու։

Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 2 Հոկտեմբերի 1898 Թ.

ԹԻՒՐՔԵՐԸ ՀԵՌԱՆՈՒՄ ԵՆ ԿՐԵՏԷԻՑ

Չորս մեծ պետութիւնների կողմից Բ. Դրան ուղղած սպառնագիրը լուծեց վերջապէս այն խնդիրը, որ ահա քանի տարի է գրգռիցնում է լուսաւոր աշխարհի մտքերը։

Եթէ Թիւրքը մի քանի տարի առաջ հեռացնելու լինէր Կրետէ կղզուց իր զօրքերը և այդպիսով երկրին ու նրա բաղդը յանձնէր կղզու քրիստոնեայ բնակիչներին, այնքան մարդիկ չէին թշուառանալ, հազարաւոր քրիստոնեաներ իզուր տեղը չէին կոտորուիլ և կղզին այսօրուայ թշուառ ու ողորմելի դրութեան չէր հասնիլ, ինքը Թիւրքիան իզուր տեղն այնքան աւելորդ ծախքեր չէր անիլ, այնքան վնաս և կորուստ չէր ունենալ, յոյն-թիւրքական պատերազմը չէր լինիլ, Յունաստանը չէր ջարդուիլ և այսօրուայ ողորմելի վիճակի մէջ չէր ընկնիլ, Թիւրքը ի վնաս հէնց իր շահերի այն ատրճան գլուխը չէր բարձրացնիլ, յոյն-թիւրքական պատերազմից առաջ կատարուած կոտորածները, խոստումները չէին մոռացուիլ և, վերջապէս, այսօր Բ. Դուռը մեծ-մեծ փորձերից յետոյ՝ ստիպուած չէր լինիլ նուաստանալ և Կրետէի պատճառով Յունաստանի դէմ տարած յաղթութիւնից յետոյ՝ հաւաքել իր ունեցած-չունեցածը և հեռանալ Կրետէ կղզուց։

Մինչ այսպէս է. երբ կարելի է աւելի քիչ կորուստով պատուով վէճից և խաղաղութեամբ ու գլուխն անելով վերջացնել գործը, – մարդիկ հակառակում են, իսկ յետոյ մեծ անպատւութեամբ տուժում են և ամեն բան կորցնում։

Ինչ որ անհատի հետ է պատահում, նոյնը կրկնւում է և տէրութիւնների, ամբողջ ազգերի հետ։

Չօ կարո՞ղ էր Սպանիան ժամանակին ինքնավարութիւն շնորհել Կուբային, կուբացիների արդար և օրինաւոր պահանջներին գոհացումն տալ կամ ամերիկացիների միջամտութեան հէնց սկզբումը մի որ և է համաձայնութիւն կայացնել և սանձել ամերիկացիների՝ կուբացիներին «ազատելու եռանդը», բայց Սպանիան այդ չկամեցաւ, խրոխտաց... և վերջը հօմ անպատւութիւնն ընդունեց, հօմ ամեն բան կորցրեց և իրեն մնաց միմիայն Ամերիկան գտնող Կոլումբոսի ոսկորները, որ և ուզում է բերել Սպանիա...

Թիւրք կառավարութիւնն էլ այսօր մի քիչ զօրք ունի Կրետէում և այժմս այդ զօրքը Կրետէից յետ տանելու գործովն է զբաղուած։

Հարց է, թէ ինչո՞ւ այսօր է կատարւում այն, ինչ որ տարիներ առաջ առանց կորուստի կարող էին գլուխ բերել եւրոպական տէրութիւնները և թոյլ չտալ՝ որ փոքրիկ Յունաստանը ջարդուի և հազարաւոր քրիստոնեաներ, վերջապէս անմեղ մարդիկ կոտորուին... Պատճառը շատ պարզ է. որովհետև մեծ տէրութիւնները չէին կարողանում համաձայնուել միասին գործելու համար։

Իսկ վերջերս, երբ Կրետէում թիւրքերը մի քանի տասնեակ անգլիական զինուորներ կոտորեցին, այդ ժամանակ միայն եւրոպացիներն զգացին իրենց կաշուի վրայ մուսուլմանների բարբարոսութեան համը, այն ժամանակ միայն անգլիացիները՝ խօսելու ու ճառելու տեղ՝ բռունցք բարձրացրին։

Ի հարկէ, բռունցքի առաջ մուսուլմաններն էլ կատու են կտրում, ինչպէս որ բոլոր արևելեան ժողովուրդները։

Եւրոպացիներն այս անգամ միայն խստութեամբ վերաբերուեցին թուրքերին. կատակ բան չէր, կոտորուողը հօ՛ Կրետացի չէ, շամփուրի վրայ ցցուողը հօ՛ հայ չէ, սպանուողները — անգլիացիներ են...

Եւ դեռ չեն ուզում հասկանալ, թէ ինչպէս մեծ Բիսմարկը, առանց կեղծաւորութեան, իրեն յատուկ պարզութեամբ ասում էր, թէ ամբողջ արևելեան խնդիրը մի պոմերանցի զինուորի ոսկորներին չարժէ։

Ինչ և իցէ, մի քանի պոմերանցիների ոսկորներ փշրելով՝ Թիւրքերն իրենք օգնեցին Կրետէի խնդրի յաջող լուծման։

Թրքական զօրքերը Կրետէից հեռանալուց յետոյ, ինչպէս առիթ ենք ունեցել ասելու, կարելի պիտի լինի — Կրետէին շնորհել այն ինքնավարութիւնը, որ յարմար է երկրին և ապահովեցնել այդ կղզու բնակիչների ապագան։

Թրքական զօրքերի հեռանալուց յետոյ՝ եւրոպական տէրութիւնների համաձայնութիւնից է կախուած Կրետէ կղզու բաղդը և բարեկարգութիւնը։

Ամենից առաջ ո՞վ կլինի և ո՞վ պիտի լինի այդ կղզու ընդհանուր-նահանգապետը։

Ահա խնդիրը, որ էլի պիտի զբաղեցնէ պետութիւններին։

Ամենայն դէպս, յայտնի և յարմարաւոր կանդիդատը՝ Յունաստանի թագաւորի երկրորդ որդին՝ պրինց Գէորգն է։

Տեսնենք Կրետէի խնդիրը լուծելուց յետոյ՝ կլմարերեն և միւս՝ իրենց լուծման սպասող խնդիրները, որոնց յաջող լուծումից է կախուած օսմանեան կայսրութեան յարատևութիւնն ու բարօրութիւնը։

Հոկտեմբերի 1-ից 31-ն դեկտեմբերի «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում եւ վճարում են 3 րուբ. 50 կոպ.։

ՔՐՈՆԻԿՈՆ

Բաթումի տեղական ռուս թերթը մի ցաւալի դէպք է պատմում, որ մօտերս է է կատարուել այնտեղ։ Սեպտ. 19-ին, ասում է «Չերն.-Վեստ.»-ը, Օդեսայից Բաթում հասան չորս հոգի թրքահպատակ հայեր, որոնք վերադառնում էին իրենց հայրենիք՝ Բիթլիս քաղաքը։ Ժամանակաւորապէս նրանք իջևանեցին իրենց մի ծանօթի արճարանում, որը այդ միջոցին գործով Թիֆլիս էր գնացել, այս պատճառով էլ յիշեալ գաղթականներին ընդունում է արճանատիրոջ գործակատար և ազգական Մ. Մահտեսի-Յովհաննիսեան։ Գաղթականներն իրենց մօտ գտնուած 609 րուբ. փողը կամենում էին արճարանատիրոջ՝ Բոշիբեանին յանձնել, խնդրելով որ Բիթլիս հասցնի, որովհետև իրենք վախենում էին, թէ ճանապարհին փողերը կամ կկորցնեն և կամ կը կողոպտուին։ Բոշիբեանն այնտեղ չլինելու պատճառով՝ նոյն ծառայութիւնն յանձն առաւ կատարել նրա գործակատար վերոյիշեալ Մահտեսի-Յովհաննիսեանը։ Թրքահպատակ հայերն յանձնեցին իրենց փողերը թրքական-ոսկիներով...։ Փոխանակ նրանց անդորրագիր տալու, սեպտ. 22-ին Յովհաննիսեանը անյայտանում է։ Գործն ընկնում է ոստիկանատուն. շատ դէս դէն որոնելուց յետոյ՝ սեպտ. 27-ին բռնում են նրան և փողերի մի մասը գտնում... Գործն յանձնուած է պատշաճաւոր իշխանութեան։

Ուրիշներն էլ են մեղադրւում։

Ահա ձեզ մի աւազակութեան քաղաքավարի օրինակ։ Խեղճ թրքահայերը, ո՜վ գիտէ քանի տարիներ օտարութեան մէջ քրտինք թափելով, կեանք մաշելով, տրնից-տեղից զրկուած, սև օրուայ համար փոքր գումար են աշխատել։ Եւ այն յափշտակում է ո՜վ... քո՜ւրդը։ Ոչ, իր հայ քրիստոնեայ եղբայրը...։

—

Գերմանիայից Օդեսայի և Բաթումի վրայով Թիֆլիս բերին հանգուցեալ Անդ. Արծրունու մարմինը և հինգշաբթի օրը, հոկտ. 1-ին, Խոջիվանքի գերեզմանատանը հողին յանձնեցին։ Չնայելով վատ եղանակին՝ հանգուցեալին յարգողները ներկայ էին թաղման հանդէսին. կային պսակներ. ճառեր խօսեցին։

—

Բողոքականաց ուսումնարանների վարչութիւնը մի շրջաբերականով յայտարարել է, որ այսուհետև իրենց ուսումնարանների ուսուցիչների արձակման և ընդունելութեան գործը կախուած կը լինի ժողովրդական ուսումնարանների տեղական դիրեկցիաներից և ոչ թէ առաջուայ պէս պաստորներից ու ծխական խորհուրդներից։

—

Պետերբուրգի ուսումն. շրջանի հոգաբարձուն՝ համալսարանի ռեկտորի համաձայնութեամբ՝ դիմել է լուսաւորութեան մինիստրութեանը, առաջարկելով որ նոր կանոնագրութիւն մշակուի համալսարանի կօշմնակի ունկնդիրների համար։

—

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը որոշել է, որ այսուհետև այն ճանապարհորդները, որոնք երկաթուղիների գնացքի ժամանակ ուշանում են տոմսակներ առնելու, նրանք պէտք է վազոնում ստանան առանձին վաւերաթուղթ կամ եարլիկ։

—

Նոյն մինիստրութիւնը մտադրութիւն ունի մշակելու՝ ռուսաց երկաթուղիներով տեղափոխուող բազմների և ապրանքների ապահովագրելու հարցը։

—

Կառավարիչ սենատը բացատրել է որ՝ այն անձերին, որոնք խմիչքեղէնների հիմնարկութիւններ ունին, իրաւունք չունին վոլոստների դատաւորի պաշտօն ստանձնելու։

—

Պետերբուրգում բացուելիք ֆրանսուական գեղարուեստական-արհեստական և տնայնագործական ցուցահանդէսի կարգադրիչ բիւրոն խնդրում է մեզ հրատարակել, որ ցուցահանդէսը կը բացուի 1899 Թ. փետրուար 3-ին, փոխանակ նոյն տարուայ հոկտեմբերի 15-ին, ինչպէս մտադրութիւն կար սկզբում։ Ցուցահանդէսը տեղի կունենայ Պետերբուրգում՝ Սոլեանոյ Գորոդի մեծ շէնքերի և սրահների մէջ։ Ցուցահանդէսին կից կըկազմակերպուի «գիտական բաժանմունք», որի կազմութեան մէջ կըմտնեն էքսպօնատներ՝ հնագիտական, պատմական, ազգագրական և այլ ճիւղերից։ Ամենալաւ էքսպօնատների համար կըտրուին մեդալներ (ոսկէ, արծաթէ և բրոնզէ) և գովասանական թերթեր։

Ցուցահանդէսից գոյանալիք ամբողջ եկամուտը կըյատկացնուի Կարմիր Խաչի Ընկ. Պետերբ. Մասնաժող. հիմնարկութեանց օգտին՝ օգնելու խեղանդամ զինուորներին և նրանց ընտանիքներին. այս հիմնարկութիւններն են՝ կոյրերի ուսումնարան-ապաստարանը, որ առաջինն է Ռուսիայում, և Կարմիր Խաչի Գթութեան եղբայրների ինստիտուտը։ Էքսպօնենտների յայտարարութիւններն ընդունւում են Կարմիր Խաչի Ընկ. Պետերբուրգի գրասենեակում, Ковенскій пер. № 29։

—

«Կավկազ»-ին հաղորդում են, որ Վլադիկավկազում «Դարիալ» անունով մի ընկերութիւն է հիմնւում՝ ապակի և ապակեղէն իրեր պատրաստելու։ Ընկերութեան նախաձեռնողը մի երիտասարդ քիմիկոս է, որի հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ Վլադիկավկազի շրջակայքում այդ ձեռնարկութեան համար բաւական նիւթ կայ։ «Դարիալ» ընկերութիւնը մտադիր է իր գործարանը հիմնել Վլադիկավկազի մօտ։ Դրամագլուխն առ այժմ 30,000 րուբլի է։ Ծրագիրը մշակուած է և շուտով կըներկայացնուի պատշաճաւոր իշխանութեան՝ ի հաստատութիւն։

—

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը հարց է յարուցել երկաթուղային բուֆէտների և խոհանոցների վրայ աւելի խիստ հսկողութիւն սահմանելու մասին։

—

Ներկայ տարուայ յուլիսի 1-ին ամբողջ Ռուսիայում եղած պետական խնայողական 4,388 գանձարաններում գումար եղել է 485,809,000 րուբ., որի համար գրքոյկներ տրուել են 2,577,269 հատ։

—

Ինչպէս երևում է «Կասպի»-ի հաղորդած տեղեկութիւններից, Ուրալեան լեռների ստորոտում՝ Ուֆա նահանգում և Անդրկասպեան երկրումն էլ նաւթի հետքեր են երևացել։

—

Վրաց ազնուականների թատրոնում Կաստելլանոյի իտալական օպերի խումբը ստիպուած վերջացրել է իր ներկայացումները, ինչպէս գրում է «Նով.-Օբ.»-ն, որովհետև ելեքտրական լուսաւորութիւն այլևս չի լինելու այդ թատրոնում։

—

Թիֆլիս են եկել մի խումբ չինացիներ և Միքայէլեան փողոցում եղած ցիրկում տալիս են իրենց ներկայացումները. Չեռնածութիւններն ու կատարած ճարպկութիւնները թէև այնքան հետաքրքիր չեն, բայց հասարակ ժողովրդին մեծ զարմանք են պատճառում։ Առաջին ներկայացումը տուին հոկտ. 1-ին։ Իբրև չինացիների գործ, արժէ միայն մի անգամ տեսնել։

—

Սեպտեմբերի սկզբներում եղանակն անսպաս ցրտեց Կովկասեան լեռներում եկած ձիւնի և մօտակայ տեղերում թափուած կարկուտի պատճառով։ Այնուհետև եղանակը աշնանային էր և տաք։ Սեպտեմբերի վերջումը եղանակը կրկին փոխուեց, հոկտ. 1-ին շատ անձրև եկաւ և ջերմաչափը սովորական (սառելի տակ) 18 աստիճանից իջաւ 10 աստիճանի: Կարծեցին թէ ձմեռը եկաւ, բայց հոկտ. 2-ին եղանակը բարեփոխուեց:

Պէտք է ասել, որ այս տարի թէ մեր կողմերը և թէ Եւրոպայում եղանակները խիստ փոփոխութեան են ենթարկւում: Սեպտեմբերի 30-ին Պետերբուրգում արդէն մեծ ձիւն է եկել:

—

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԱՐՄԱՒԻՐԻՑ.—Արիստակէս Սեդրակեան սրբազանը դուրս է եկել թեմը շրջելու: Մենք էլ բաղդ ունեցանք ոչ միայն տեսոյն, այլ և պատարագին, որ շաբաթ, սեպտ. 26-ին կատարեց տեղիս եկեղեցում: Սեպտ. 27-ին սրբազանն ուղևորուեց Ստաւրոպոլ, որտեղից այցելելու է Պեատիգորսկ, Մոզդոկ և այլ քաղաքներ: Ցանկանք, որ միայն այցելելով չբաւականանայ սրբազանը, այլ, իբրև Աւետարանի պաշտօնեայ, լսի ժողովրդի ցաւերը և ըստ այնմ դարման անի:

—

ՉԱՄԱԽՈՒՑ.—Կիրակի, սեպտ. 27-ին թէև եկեղեցու զանգակները երկար ու բարակ ղօղանջիւնով ժողովրդին եկեղեցի էին հրաւիրում, բայց տիրացու և երգիչներ չլինելու պատճառով պատարագ չեղաւ: Դրան հակառակ, այսօր, սեպտ. 29-ին, մի ոմն «բէկ»-ի աղջկան էր պսակւում և պէտք էր տեսնել, թէ ինչպէս վարդապետ, քահանայ, տիրացու երկար թափօրով, երգեցողութեամբ, հարս ու փեսին տուն տարան...: Ժողովրդի տրտունջը խիստ մեծ է:

ՊՐՈՖԵՍՈՐ ՄԻՒԼԼԵՐԻ ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԵՐԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՄԱՍԻՆ

—

Ինչպէս յայտնի է, սրանից մի երկու ամիս առաջ վախճանուեց յայտնի հայագէտ պրոֆ. Միւլլերը: Այդ առթիւ «Բազմավէպ» ամսագիրը տալիս է նրա՝ հայոց լեզուի վրայ գրած գլխաւոր գործերի հետևեալ ցուցակը, որ քաղուած է հրատարակութեան կարգով Վիեննայի ակադեմիայի գործերի հաւաքածուից.

1861.—Երկու շարք լեզուաբանական հայկական քերականութեան խնդրոյ վերայօք՝ Ա. բաղաձայններու վրայ. Բ թըւական ածանցներու վրայ:

1862—63.—Ցաւելուած հետազօտութեանց հայկական ձայնաբանութեան վերայօք՝ երեք տետրակ:

1863—Ցաւելուած հետազօտութեանց հայերէն բայերու վրայ:

1864.—Ցաւելուած հետազօտութեանց հայկական անուանց (գոյականաց) վրայ:

1865.—Հայերէն ածանցներու վրայ (ի հանդէսի Բենֆէյի Արևելք և Արևմուտք. Գ. 34):

1865.—Հայկական գրութեան սկզբնաւորութեան վրայ:

1865.—Հայկականք Ա.—1. Ածանցք.—2. Ստուգաբանութիւն Աստուած, կուռք, առիւծ, ծունկն բառերու:

1870.—Հայկականք. Բ.—1. Անկատարք բայերու.—2. Ստուգաբանութիւն աղուէս, օր, ինձ, տէր, սիրամարգ, վարդապետ, ուղի բառից:

1871.—Հայկականք.—Գ.—1. Հայկական բառից վերջաւորութեանց օրէնքներն ու շեշտերը.—2. Ստուգաբանութիւն բազմաթիւ բառերու:

1874.—Հայկականք. Դ.—1. Բայերու երկրորդ դէմքի ս վերջաւորութեան վրայ.—2. Գործիական հոլովի բ. տառին վրայ. — 3. Ստուգաբանութիւնք բառից:

1878.—Հայկականք. Ե.—1. Բայից սահմ. կատարեալի և ստորադասականին ց տառին վրայ.—2. ս, շ, ջ տառից վրայ. —3 Ստուգաբանութիւնք բառից:

1879.—Հայերէն լեզուի դիրքը հնդկագերմանական լեզուաց շրջանի մէջ:

1890.—Հայ բառից ստուգաբանութիւնք (69 բառ.):

Սրանց հետ յիշենք նաև իւր եռահատոր գլխաւոր գործն՝ *ծրագիր լեզուաբանական գիտութեան* (1876—87):

Պր. Միւլլերի կենաց և գրուածոց վերայ մանրամասն և ընդարձակագոյն տեղեկութիւններ խնդրող ազգային բանասիրաց ցոյց կուտամք՝ Հ. Գարեգին Զարբհանալեան վր.-ի *Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յարեւմուտս* (ԺԴ - ԺԹ դար) հմտալից գրուածն (էջ 295—305). տպագր. 1895, ի Վենետիկ:

ԿԵՂԾԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ

—

Կան երևոյթներ, որոնք իրենց մասնաւոր բնաւորութեան պատճառով սովորաբար կամ անուշադիր են թողնւում և կամ անցողակի են յիշւում: Բայց երբ այդ մասնաւոր երևոյթների մէջ լինում են այնպիսի կեղծաւորութիւններ, որոնք յանդգնաբար հրապարակի վրայ են դըրւում, այդ ժամանակ արդէն ոչ ոք իրաւունք չունի լռելու և հասարակական հարցերով զբաղուող թերթը չի կարող առանձին խորհրդածութեան չ'ենթարկել այդպիսի մի չարիք:

Ընթերցողներին յայտնի է, որ մի երկու տարի առաջ Շուշում հոգաբարձական ընտրութիւն եղաւ և մէկ ձայնի առաւելութեամբ ընտրուեցան վեց մարդիկ, որոնք աշխատում էին ընտրուել, որքան ժողովրդի մէջ խօսւում էր ու լսում էինք: Բայց արդեօք դրանք իրենց արժանիքով ընտրուեցան թէ՞ պատահաբար, մենք այժմ ստուգել չենք կարող և նշանակութիւն էլ չենք տալիս դրան: Արժ. Գարեգին վ. Սաթունեանցը ղեկավարելով ընտրութիւնը, ստորագրութիւն առաւ այդ պարոններից, որ անպայման պարտաւորւում են հնազանդուելու Նորին Վեհափառութեան բոլոր կարգադրութեանց, և յետոյ առաջարկեց հաստատութեան: Հաստատուեցան: Երկու տարի է անցել. այդ միջոցում երկուսը հրաժարուեցան կամ գործերի և կամ պաշտօնական տեղափոխութեան պատճառով, այժմ էլ երեք հոգի հրաժարուեցան մի յանդուգն թուղթ գրելուց յետոյ՝ թէ ըմբոստութեան կնիքը իրենց վրայ կրելով և թէ միանգամայն իրենց խոստումը դրժելով: Որ այս այսպէս է, երևում է դրանց յիշեալ թըղթից: Նայենք, քննադատենք և տեսնենք թէ ինչ հոգով է գրուած այդ թուղթը, ինչ փաստեր է բովանդակում և, առհասարակ, ինչ են ուզում ասել այդ երեք հոգաբարձուները:

Դրանք սկսում են իրենց թուղթը մի առանձին պաթոսով, թէ ինչպէս «Շուշու հայ հասարակութիւնը» (ոչ թէ հայ հասարակութիւնը, այլ հայոց եկեղեցու ժողովուրդը) ընտրեց իրենց և Նորին Վեհափառութիւնը «վաւերացրեց» (ոչ թէ վաւերացրեց, այլ հաստատեց դըրանց հոգաբարձու) և թէ ինչպէս իրենք վախենում էին, որ մի գուցէ իրենք էլ իրենց նախորդների պէս ըմբոստանան իրենց ընտրողների և հաստատողի առաջ: Ցետոյ այդ պարոնները մեծամըտութեամբ աւելացնում են, որ թէև ըմբոստանալու առիթներ շատ են ունեցել, բայց և այնպէս խոյս են տուել դպրանոցի օգտի համար, իբր թէ իրենց ընտրուելը, կամ հրաժարուելը կամ ծառայութիւնը մի մեծ անհրաժեշտութիւն է բարձրագոյն հոգևոր իշխանութեան համար և մեր քաղաքում իրենք են որ կան, կամ թէ իրենք որ ընտրուել են մի քանի տասնեակ մարդկանցից, աւելի նշանակութիւն ունին, քան ամբողջ ազգի...:

Այս սպառնալից և բարձրագլուխ նախաբանից յետոյ պարոնները բերում են փաստեր (Աստուած փաստեր համարի): Դրանք ասում են, որ պ. Մաղաթեանի հեռանալուց յետոյ տեսուչ որոնեցին, սակայն «փորձուած, մասնագէտ անձինք» հրաժարուեցան «ծանօթ լինելով դպրանոցի անցեալ տխրառիթ պատմութեան» (այսինքն իրենց նախորդների խռովութեան) և խախտուած տեսնելով տեսչական ինքնագլուխ իրաւունքները: Ասում ենք ինքնագլուխ, որովհետև կանոնադրութեան մէջ կամայականութիւն և ինքնիշխանութիւն չկայ և վերացրած է հէնց այդ կամայականութիւնն ու ինքնիշխանութիւնը, որով դպրանոցը դարձնում էին մի քանի անձանց սեփական կալուածքը կամ գործատունը: Թէ քանի հոգի են եղել այդ հրաւիրուողները և ինչու են մերժել թող ասէ հայր Սաթունեանցը. վերջապէս ընտրում են մի պարոնի և ինքնիշխանաբար, առանց Նորին Վեհափառութեան հաստատութեան, հրաւիրում են և հայրապետական հրամանով յետ դառնում իրենց մտադրութիւնից: Պարոնները ասում են որ՝ երբ թէ այդ պարոնը «անձնուիրաբար ընդունել է այդ առաջարկը և թողնելով ուսուցչապետութեան պատուաւոր ամբիոնն արտասահմանում» ճանապարհ ընկել աստուածապահ Շուշու մատաղ սերնդի կրթութեան նուիրուելու: Չգիտենք դրանք ընթերցողներին են միամիտ կարծում, թէ իրենք այնքան միամիտ են, որ չգիտեն թէ ինչ է ուսուցչապետական ամբիոն, ինչ է այդ ամբիոնը թողնելը և Շուշի գալը, ինչ է մատաղ սերնդի կրթութեան նուիրուելը: Որքան գիտենք, այդ պարոնը հայերէն չգիտէ, բնալուծական լաբորատորիայում ասիստենտ է եղել և ստացել է ոչ աւելի, քան 60—70 րուբլի: Նա կարող է շատ պատուելի և օգտակար մարդ լինել, սակայն կատարելապէս անյարմար թէ դպրոցին և թէ «հոգաբարձութիւն» կոչուած մարմնի ընտրութեան:

Պարոնները այստեղ մի առ մի առաջ են բերում այն իրաւաբանական հիմքերը, որոնք դուրս են գալիս իրենց ինքնիշխան կարգադրութիւնից և իրաւունք են տալիս հրաւիրուածին դատի դիմելու, ուստի և իրենց ներողամտութիւնն են գովասանում, որ այստեղ էլ դիջան (լսում էք) և թախանձանօք ամեն ինչ կարգի դրին: Էլի սկսան տեսուչներ հրաւիրել, բայց մերժուեցան. (ո՞ւմ են հրաւիրել, Գարեգին վարդապետ, քանի տեսչացու էք ունեցել և ո՞վ ինչ է պատասխանել, հայր սուրբ, ասացէք, ապտակեցէք սուտը կամ վերականգնեցէք ճշմարտութիւնը): Ցետոյ յիշում են, որ հոգաբարձութիւնը «փորձեց» տեսուչ հրաւիրել Հ. Մեսրոպ վարդապետին. սա եկաւ սահմանափակ իրաւունքներով: Բայց իրենք յոյս ունէին միւս տարին կանոնադրութիւնը «հանելու փոշու տակից» (ճշմարիտ որ փոշու տակին է և պարոնները չեն կարդում ու չեն հասկանում, թէ ինչ են ուզում): Ցանկարծ տարւայ վերջում տխրառիթ հանգամանքներով Հ. տեսուչը Ս. Էջմիածին կոչուեց: Հոգաբարձուներն ապշեցան. ոմանց երեսի ժպիտը շատերի աչքում ղուարճութիւն էր համարւում, իսկ ուրիշների աչքում այլութեան նըշան: Լսուեց, որ Հ. տեսուչը իւր ծառայութեան համար իրենից՝ պատւով շատ քաջ այդ մարմնից՝ վկայական է ուզել. տարաձայնութիւն է եղել ու չեն տուել: Այս բոլորն անցած է և դրանք չեն ուզում յիշատակել: Եւ տեսէք յետոյ ինչ են ասում. «Հոգաբարձութիւնն՝ որ ներկայանում է իբրև դպրանոցի պատասխանատու մարմին, որ պարտաւոր է իմանալ ամեն մի կարգադրութեան կամ փոփոխութեան մասին, դիմեց անմիջապէս Ձեր Վեհափառութեան, խնդրեց կամ յետ ուղարկել վարդապետին, կամ յետ կոչուելու յարգելի պատճառներն յայտնել, բայց չըստացաւ և ոչ մի պատասխան»: «Վայ ձեզ, որ աբբեղայ էք և ոչ ի գինւոյ». ա՜յ պարոններ, չէ՞ որ ձեր մէջ համալսարանական մի հոգի կայ. այս ինչ էք դուրս տալիս. դուք ինչպէս էք համարձակւում այսպէս յանդուգն կերպով դիմել դէպի մի եկեղեցու բարձր Պետը. թէ՞ դուք չէք հասկանում թէ ինչ էք խօսում: Դուք պատասխանատու մարմին էք Նորին Վեհափառութեան առաջ և ձեր պարտքն այնքան է, որքան ձեր վրայ դնում է. Վեհափառը յետ է կանչում Իւր վարդապետին, իսկ դուք ինչպէս էք համարձակւում «յետ կոչուելու յարգելի պատճառների յայտնելը» պահանջել, այն էլ յարգելի պատճառները: Ուրեմն ենթադրում ենք, որ ձեր աչքում անյարգելի պատճառներ էլ կլինեն: Ի՞նչ կասէ բարեպաշտ ժողովուրդը՝ կարդալով ձեր այս գրութիւնը. դուք ուրեմն խլրտումների ու վիրաւորանքների համար էք մնում պաշտօնի մէջ՝ անկոչ հիւրերի պէս:

Պարոնները նորից դիմում են իրենց նախկին տեսչացուներին և սկսում են ջուր ծեծել. տեսուչների կանոնից է, ասեն, որ գրում է թէ կանոնադրութիւն և կարգ ու կանոն պէտք է լինի, որ տեսչացու գանէք. ո՞նց չէ: Վերջապէս Վեհափառ Հայրապետը կամենալով միշտ վարդապետ տեսուչ նշանակել, ժամանակաւոր տեսուչ է նշանակում հայր Տիրայր վարդապետին. հոգաբարձուների մէջքը կոտրւում է և այժմ այդ երեքը նրա նախից են բռնում. ասում են որ «տէր չէ բարձր ուսման», մինչդեռ հայր սուրբն աւարտել է ճեմարանը և երեք տարի սովորել է Պետերբուրգում, կարծեմ որ եթէ ոչ աւելի՝ գոնէ պարոնների հրաւիրածներից պակաս չէ. ասում են անփորձ է դպրոցական գործում, բայց յիշուածներից շատ աւելի փորձուած է երկար տարիներ ճեմարանում պաշտօն վարելով: Այս դրդապատճառութիւններից յետոյ պարոններն սկսում են կեղտեր շպրտել դպրանոցի վրայ և վայր ի վերոյ դուրս տալ: Բայց մի հարցնենք. արդեօք դուք չէ՞ք, որ ամբողջ տարւայ ընթացքում դպրանոց ոտք չէիք դնում. դուք չէ՞ք, որ ասում էիք «մենք տնտեսականի համար ենք պատասխանատու, մենք աւել առնող ենք. տեսուչը գիտէ իւրեն ուսումնարանը». դուք չէ՞ք, որ տարւայ մեծ մասը երկու կամ երեք հոգով էիք ժողովներ անում. դուք չէ՞ք, որ մերժում էիք Հ. տեսչի հրաւէրը և չէիք գալիս ոչ հանդէսների, ոչ դասերի, ոչ քննութեանց, ոչ հայրապետական մաղթանքների. դուք չէ՞ք որ աղքատ աշակերտների համար ոչ մի հոգացողութիւն չ'արիք. դուք չէ՞ք, որ յորդորում էիք դպրանոցին նպաստներ տալ բարեգործ. ընկերութեան. դուք չէ՞ք...: Բայց բաւական է. գուցէ կասէք՝ որ դուք չէ՞ք: Էհ ինչ չի կարելի այդպիսի թուղթ գրելուց յետոյ: Չգիտեմ ո՞վ էր մի օր ասում, թէ կան մարդիկ, որոնց կեանքի կէսը գիշեր է և մասկարադ: Ամօթ չըլինի հարցնել. դուք էլ գիշերուայ մէջ չէ՞ք. խաւարը ձեզ էլ է պատել. դուք խարխափում էք, բայց ձեր դիմակը մնացել է և ձեռքներից բռնել: Ցիշո՞ւմ էք, որ մի օր կարդում էիք ձեր մասին. «Բարւոք մարգարէացաւ Կիւրեղ եպիսկոպոսը թէ՝ հոգաբարձուները աւել անողներ են». այժմ նորից դընո՞ւմ էք դիմակը. ուշ է արդէն, ամենքն են ձեզ տեսել ու ճանաչում: Իսկ դպրանոցի նիւթակա՞նը. կարգին էք պահել, մի կոպէկ աւելացրե՞լ էք, մէկին խնդրե՞լ էք օգնելու, ինքներդ մի կոպէկ փող տուել էք. չէ՞ որ կանոնադրութեան մէջ ասուած է (14) իսկ և թէ դպրոցի պահպանութիւնը միմիայն կոնսիստորի տուածովն է, (յօդ. 22) ինչպէս լինում է, էլ դուք ինչացո՞ւ էք, էլ ինչո՞ւ է ըստ կանոնադրութեան 5 յօդ. ա. ծան. Վեհափառը կոնդակով հրամայում, որ ժողովուրդը իւր միջից պատուելի անձանց ընտրէ և եպիսկոպոսը առաջարկէ Նորին Վեհափառութեան:

Ի՞նչ են ուզում սրանք ասել. երկու բան, նախ որ կանոնադրութիւնը իւր ոյժն ունենայ և երկրորդ՝ ուսուցիչները փոխուեն, այս է դրանց փոքր ցաւը: Իրենց այս փորձանքը դրանք կրկին սպառնալիքով են յանդգնում ասել. «Առ ի խոյս տալ անախորժութիւններից (!!), որոնք կարող են ծագել մեր խնդիրը Ձեր կողմից մերժուելուց, շնորհեք մեզ կանոնադրութեան իրաւունքը...»: Անախորժութիւնից. հա՜, հա՜, հա՜, հա՜,. ինչպէս չէ. ամբողջ քաղաքը ոտքի կըկանգնեցնէք, ամենքն էլ ձեռքները սրտերի դրած սպասում են ձեր ակնարկին. հրաժարուեցաք. «պա՜հ, քաջերը սև հագան»: Ասացէք խնդրեմ, դուք այս ամենը գըրել էք իբրև եկեղեցու թէ իբրև հասարակութեան անդամ, այս մեզ յայտնեցէք, ապա մենք ձեզ բան շատ ունինք ասելու:

Արդ, այս համառօտ քննադատութեամբ հրաւիրում եմ «Նոր-Դար»-ի յարգելի խմբագրութեան ուշադրութիւնն այս տըգեղ երևոյթի վրայ: Երեք հոգաբարձու (չորրորդը չէ հրաժարուել և ուրեմն նրա ստորագրութիւնը յիշեալ թղթում պատահական է) համարձակւում են ազգի հոգևոր Պետից՝ նրա դպրանոցի ուսումնականի և կանոնադրութեան ինքնիշխան գործադրութեան իրաւունք պահանջել և դրա համար վերոյիշեալ անհեթեթ միջոցներին են դիմում: Ուսումնականի մասին նրանք այնքան հասկացողութիւն ունին, որքան չինաց բաղդիխանը իւր ժողովրդի մասին, ուստի ուզում են տեսուչ ընտրել: Իսկ կանոնադրութիւնն իրենք են քանդում, չկատարելով նրա միջի բազմաթիւ յօդուածները, ինչպէս նիւթականը լաւացնելու, գիշերօթիկներ պահելու, տարեկան երկու աշակերտ համալսարան ուղարկելու, տեսչի օգնական պահելու, քահանայացուներ պատրաստելու, մինչև նրանից ձեռնադրուելը բոլոր ապրուստը հոգալու, հիւանդանոց, բժիշկ, գեղատուն, հիւանդապահ ունենալու և այլ շատ պարտաւորութիւններ: Այլ և դրանք չեն ուզում ճանաչել այն ամենը, ինչ որ կատարւում է տեսչի առաջարկութեամբ ըստ կանոնադրութեան և Նորին Վեհափառութեան հրամանով, իսկ այսքան վրդովմունքը, սպառնալիքը գլուխ քարով տալը միմիայն նրա համար է, որ իրաւունք չունին տեսուչ ընտրել և իրենց անհաճոյ ուսուցիչներին մի փառաւորապէս վռնդել: Դրանք ուզում են խռովութիւն անել կեղծաւորութեան դիմակի տակ, հոգևոր իշխանութեան ստորագրում են և մնում պաշտօնի մէջ, բայց յետոյ ամեն միջոցներով անարգում, դուրս գալիս. հոգաբարձութիւնն հաստատուած է եկեղեցական սկզբունքների վրայ, բայց այդ եռակի պարոնները խոյս չեն տալիս անախորժութիւններ սարքելուց, ըստ կանոնադրութեան, ըստ ծրագրի և Նորին Վեհափառութեան անօրինութեամբ արուած բոլոր կարգերն ապօրինի հրատարակելուց և այսօր էլ իրենց կեղծաւորութեան չար հրաւէրը հրապարակ են հանում՝ տպագրելով պաշտօնական գրութիւնն առանց հոգաբարձական իրաւանց և որոշման:

Արդեօք սրանց մասին չէ՞ ասուած. «Զգոյշ լերուք ի սուտ մարգարէիցն որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, և ի ներքոյ են գայլք յափշտակողք»:

*

Շուշի

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

Վիեննայի Մխիթարեան հայրերի բերան «Բազմավէպ» ամսագրին ոմն Կ. Ա. հետևեալ հարցն է առաջարկել:

Հետաքրքիր եմ իմանալ ձեր Սուրհանդակի միջոցաւ՝ ոչ կաթողիկէ հայ եկեղեցեաց մէջ, ս. պատարագի վերջաւորութեան ժամանակ ժողովրդին բաժնուած Մասը ինչ նշանակութիւն ունի:

Ո՞ր ժամանակէ մուտ դրած է հայ եկեղեցւոյ մէջ Մասի բաշխումը։

Միթէ՞ ուրիշ քրիստոնեայ եկեղեցիք ունէին այս սովորութիւնը։

Եթէ՞ հայկական եկեղեցւոյ արարողութեան կըպատկանի, ինչու չի գործադրուիր հայ կաթողիկէ եկեղեցեաց մէջ։

Մենք չգիտենք, թէ մեր կաթոլիկ կղերն ինչ պատասխան կըտայ այդ հարցին, բայց վատ չէր լինիլ, եթէ այդ հարցասէր պարոնը, իւր հետաքրքրութեանը լի ու լի գոհացում տալու համար, դիմէր նաև Ս. Էջմիածին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԴՐԷՅՖՈՒՍԻ ԳՈՐԾԸ. — Ընդհանուր պրոկուրոր Մանոն, Դրայֆուսի dossier-ի հետ ծանօթանալով, գործն արդէն յանձնել է վճռաջինջ ատեանի նախագահ Լեօվին. dossier-ի հետ միասին ներկայացրել է նաև իւր եզրակացութիւնը, այլև արդարադատութեան մինիստրի յայտարարութիւնը և տիկին Դրայֆուսի խնդրագիրը։ Ահա թէ ինչ է ասել Մանոն «Journal des Dèbats»-ի աշխատակիցներից մէկին. «Երբ իմ եզրակացութիւնը հասնի նախագահի ձեռքը, այն ժամանակ ոչ մի իշխանութիւն՝ ոչ կառավարութիւնը, ոչ պատգամաւորների ժողովը, ոչ սենատը, ոչ Եւրոպան չեն կարող դադարեցնել գործը և դուրս կորզել այդ գործն արդարադատութեան ձեռքից... Վերաքննութեան վերաբերեալ 20 գործերից, որ մենք քննել ենք նոր օրէնսդրութիւնը հրատարակուելուց ի վեր, 7-ը՝ դատարանը վճռել է ոչ համաձայն իմ եզրակացութեանց։ Բայց ես ամեն ջանք գործ կը դնեմ պաշտպանելու իմ եզրակացութիւնները Դրայֆուսի գործում։ Ընդհանուր պրոկուրորի խօսքն ազատ է, և ես օգուտ կըքաղեմ այդ բանից»։ «Matin»-ն աւելացնում է, որ հաւաստի աղբիւրից իւր ստացած տեղեկութիւնների համաձայն, Մանոն իւր եզրակացութեան մէջ վերաքննութեան կողմն է և հաւատացած է, որ դատարանը կըհամաձայնի իրեն հետ։ Մանոյի կարծիքով, Հանրիի խոստովանութիւնն անկասկած նոր փաստ է ներկայանում, որը Դրայֆուսի գործի վերաքննութիւնն անխուսափելի է կացուցանում։

—Բուդապեշտի «B. Hirlap» լրագիրը տալիս է իւր աշխատակիցներից մէկի մի բարձրաստիճան դիւանագէտի հետ ունեցած հետաքրքրական զրուցատրութիւնը։ Վերջինս ասել է, որ Բրիսսոնը հաստատապէս վճռել է վերաքննել տալ Դրայֆուսի գործը։ «Մինչև անգամ ես կարող եմ գրեթէ հաւաստեաւ ասել, որ երկու-երեք օրից յետոյ Դրայֆուսը կըթողնի Սատանաների կղզին և կըբերուի Փրանսիա»։ Այնուհետև դիւանագէտը յայտարարեց, որ գնդապետ Ձվարցկոպենն երբէք յարաբերութիւններ չի ունեցել Էստերհազիի հետ. վերջինս յարաբերութիւններ է ունեցել ուղղակի Բեռլինի ընդհանուր շտաբի հետ, իսկ petit bleu-ն անկասկած կեղծ դոկումենտ է։

—Կլեմանսոն, պատասխանելով այն լրագրներին, որոնք պահանջում են Դրայֆուսի օգտին եղող ագիտացիային վերջ տալ այժմ, երբ Դրայֆուսի գործն արդէն անցել է վճռաջինջ ատեանի ձեռքը, գրում է. «Մեզ հրաւիրում են հաշտուելու, բայց անյաջող ժամանակ են ընտրել։ Աշխատում են վերաքննութիւնը գըլորել, իսկ Պիկարին իրաւաբանական սպանութեան ենթարկել։ Կարո՞ղ ենք մենք զինաթափ լինել այսպիսի պարագաներում։ Մենք զէնքը վայր կըդնենք միայն արդարութեան, ճշմարտութեան առաջ։ Իսկ առայժմ մենք կռիւ կըմղենք ստախօսների, կեղծողների և նրանց համախոհների դէմ,—կռիւ առանց դադարի, անողորմ կռիւ»։

—«Temps»-ն ասում է, որ մտքերի խաղաղեցմանը խիստ խանգարում է այն գաղտնապահութիւնը, որով պարապում է մինիստրութիւնը վերջին երկու շաբաթուայ ընթացքում։ Այդ բանից այն է առաջանում, որ հասարակութիւնն սկըսում է ագահաբար ականջ դնել ամեն տեսակ լուրերի, որոնց ճշմարիտ լինելը չի կարելի ստուգել։ «Temps»-ի կարծիքով, անհրաժեշտ է, որ վճռաջինջ ատեանը շուտով իւր կարծիքն յայտնէ Դրայֆուսի գործի մասին և կառավարութիւնը պաշտօնապէս յայտարարէ, թէ ինչ է թագնում Պիկարի դէմ բացուած քննութեան տակ։

—Պարիզի ոստիկանութիւնը մի հաշիւ է հրատարակել կիրակի օրը պատահած անկարգութիւնների մասին։ Այդ հաշուից երևում է, որ 19 հոգի ծանր կերպով վիրաւորուած էին, բայց բազմաթիւ ձերբակալուածներից 10 հոգի միայն ազատ չեն արձակուած։ Անկարգութեանց վայրերում ոստիկանութիւնը հաւաքել է 500 գլխարկ, որոնք այրուած են, որովհետև ոչոք չէր մտել ոստիկանատուն իւր գլխարկը յետ ստանալու։ Փշրուած է 600 ակնոց, կտրատուած է մօտ 500 ձեռնափայտ, ուսերից վայր է ընկել 200 վերարկու։ Սրճարաններում փշրուած բաժակների և ափսէների թիւը ոստիկանութիւնը չի կարողացել որոշել, բայց, ամենայն դէպս, հարիւրներ կարելի է հաշուել այդ թիւը։ Նմանապէս հարիւրաւոր փողպատներ և արդուզարդի այլ պարագաներ են գըզջլուել, թափուել։ Պարիզի ծաղրածուները նկատում են, որ այս հաշիւը հրատարակուած է ի մխիթարութիւն այն վաճառականների, որոնք գանգատւում են, թէ Դրայֆուսի գործի պատճառով իրենց առևտուրը շատ վատ է գնում։

—

ԿՐԵՏԷԻ ԽՆԴԻՐԸ. — Հռոմից «Polit. Corresp.»-ին հեռագրում են, որ եթէ Դուռը հրաժարուի իւր զօրքերը Կրետէից հեռացնելուց, չորս պետութիւնները համաձայնութիւն են կայացրել բռնի միջոցների դիմելու, սակայն միմիայն յիշեալ կղզու վերաբերմամբ, բռնի միջոցների չեն ենթարկուիլ օսմանեան պետութեան միւս մասերը։ Վճռուած է պաշարել օսմանեան տեղապահ զօրքերը, աստիճանաբար զինաթափ անել նրանց, արձակել և հայրենիք ուղարկել թուրք պաշտօնեաներին և այլն։ Ճիշտ է, լուրեր էին պտտում, թէ ծովային ցոյց պիտի լինի Դարդանելում, բայց այդ ծրագիրը լուրջ քննութեան չի ենթարկուիլ, որովհետև չորս պետութիւնները չկամեցան այդքան զօրեղ հարուած տալ թիւրքական ինքնասիրութեանը, մանաւանդ այնպիսի մի ժամանակ, երբ փադիշահի մօտ հիւր է գնում գերմանական կայսրը։ Սակայն, ընդ սմին պետութիւնները պարզ հասկացրել են Դրանը, որ Կրետէի վերաբերմամբ կայացրած որոշումներն իրենք կըգործադրեն կէտ առ կէտ։ Դուռը, տեսնելով, որ այս անգամ չպիտի կարողանայ պետութիւնների ձեռքից դուրս պրծնել, այժմ ուզում է մի ուրիշ խորամանկ միջոցի դիմել։ Բանն այն է, որ Դրան մէջ այժմ եռանդով քննւում է այն հարցը, թէ պետութեանց վերջնագրին պատասխանելիս չպէ՞տք է արդեօք պահանջել, որ իբրև «սուլթանի բարձրագոյն իշխանութեան նշան», թիւրքիային իրաւունք տրուի Կրետէի քաղաքներից մէկում գէթ առժամանակ թիւրքական տեղապահ զօրք պահելու, ինչպէս իւր ժամանակին այդ իրաւունքն ստացել էր նա Սերբիայի և Բուլղարիայի վերաբերմամբ։

—

ԱՆԻՇԽԱՆԱԿԱՆՆԵՐԸ. — Եթէ հաւատանք «Secolo» լրագրին, Փիումէյում ձերբակալուած է Ռեժկովիչ անունով մի անիշխանական, որին յանձնարարուած է եղել սպանել Փիլիքս Փօրին։ Նրա ճամբրուկի մէջ գտնուած է ֆրանսիական հասարակապետութեան նախագահի պատկերը և մի քանի նամակներ, որոնք ցոյց են տալիս, որ նա պատրաստ է եղել իւր ստացած յանձնարարութիւնը կատարել մօտիկ ապագայում։

— Վիեննայից Միւնխենի «Allg. Zeit.»-ին գրում են, որ անիշխանականութեան դէմ միջոցներ ձեռք առնելու համար կոնֆերենցիա գումարելու գործն այժմ անտարակուսելի է։ Դժուար չէ հասկանալ,—ասում է թղթակիցը,— թէ ինչ ծրագիր կունենայ կոնֆերենցիան։ Հարցն այժմ այն մասին կըլինի, թէ ինչ ձև պէտք է տալ կոնֆերենցիայի եզրակացութիւններին։ Հազիւ թէ առանձին դաշնագիր պահանջուի այդ բանի համար և ամեն ինչ կըյանգի այն բանին, որ պետութիւնները փոխադարձաբար կը պարտաւորուին գործել սովորական իրաւագիտութեան կանոններով։ Ուստի միևնոյն է, այդ բանի համար առանձին արձանագրութիւն կըկազմուի, թէ՞ առանձին դաշնագիր կըկնքուի։ Բայց խիստ կարևոր կըլինի առանձին պետութեանց ոստիկանական մարմինների միջև յատուկ համաձայնութիւն կայացնելը, որով նըրանք պիտի պարտաւորուին ձերբակալել և արտաքսել անիշխանական ոճրագործներին. այդպիսի համաձայնութիւնը միայն կարող է ամուր հիմք կազմել կառավարութեանց փոխադարձ պարտաւորութիւնների համար։

—

ԹԻՒՐՔԻԱ.—Կ. Պոլսից դուրս եկած լուրերին նայելով սուլթանը պատրաստ է իւր համաձայնութիւնը տալու, որ Թիւրքիան էլ մասնակցի անիշխանականների դէմ կազմուելիք կոնֆերենցիային, և մինչև անգամ, ասում են, իւր կողմից էլ մտադիր է առաջարկելու, որ երիտասարդ-թուրքերի և հայկական կոմիտէտների դէմն առնելու համար էլ միջոցներ մշակուին։

—

ՉԻՆԱՍՏԱՆ.—«Daily News»-ը հաղորդում է Հայնանի գաւառում օտարերկրացիների դէմ հրատարակուած կոչի բովանդակութիւնը, որը հետևեալն է. «Ինչպէս սրբենք այն հայհոյանքն ու անպատւութիւնը, որով շրջապատել են Կոնֆուցիոսի կրօնը։ Մենք, ի հարկէ, պէտք է միանանք և ամեն ջանք գործ դնենք, եթէ կամենում ենք այդ անել։ Մենք պէտք է հաւաքուենք ամեն քաղաքում, աւանում և գիւղում և միաձայն խնդրենք մեր կառավարիչներին, որ թոյլ տան մեզ կամաւոր զօրքեր կազմելու։ Թող ամեն մի տան մէջ հրացան լինի. մենք ինքներս կըշինենք, եթէ չենք ունենալ։ Ժողովուրդը ոգևորութեամբ կըմասնակցի այս շարժմանը, և ամեն ոք կըձգտի կռիւ մղելու ընդհանուր թշնամու դէմ։ Մինչև անգամ մեր կանայք կաշխատեն իրենց հաւատարիմ հպատակութեան զգացումներն արտայայտել կայսրին։ Եթէ այն ժամանակ գտնուի մի մարդ, որը կըհամարձակուի պաշտպանել օտարերկրացիներին և կըխանգարի մեզ կամաւոր զօրքեր կազմելու, այդ մարդը դաւաճան կըլինի։ Նրա ցանկութիւնն այն կըլինի միայն, որ ժողովրդի մէջ խռովութիւն ձգի։ Ամեն մէկին ազատութիւն կըտրուի իւր հաշիւը տեսնելու այդպիսի մարդու հետ։ Մենք կատենք նրան. մենք նրան մեր ընդհանուրիս թշնամին կըհամարենք. մենք կերդուենք, որ չենք կարող ապրել այդ մարդու հետ միասին մի երկնքի տակ։ Բայց եթէ կըտեսնենք, մի մարդ, որը լրջութեամբ կատարում է իւր պետի կամքը,—եթէ մենք տեսնենք, որ նա պատրաստ է ոչնչացնել այն ամենքին, որոնք չարիք են գործում, և պաշտպանել նրանց, որոնք կատարում են օրէնքը, եթէ նա միացած կըլինի ժողովրդի հետ... մենք կըյարգենք այդ մարդուն և կըհնազանդուինք նրան։ Մենք հօր պէս կըպատուենք նրան»։

—Ճանքհայի «Mercury» լրագիրը հաւատացնում է, թէ երիտասարդ կայսրն ինքն էր կամենում ազատուել կայսրուհուց, որպէս զի ազատօրէն կարողանայ իւր ռեֆորմները մտցնել։ Այդ բանի համար, նա ուզում էր ձերբակալել տալ նրան և իւր մի մարդու միջոցով հրամայել էր զօրքերին, որ շրջապատեն կայսրուհու պալատը, բռնեն կայսրուհուն և տանեն այնպիսի մի տեղ, «որտեղից նա չկարողանար միջամտել»։ Սակայն յիշեալ մարդը կառավարութեանը յայտնեց կայսրի մտադրութիւնը, իսկ կառավարութիւնն իւր կողմից տեղեկացրեց կայսրուհուն, որը և հնարաւորութիւն ունեցաւ իւր ժամանակին միջոցներ ձեռք առնելու։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մեղուները եւ եղանակի գուշակութիւն.— Մեղուները վերջին աստիճանի զգայուն են օրուայ եղանակի փոփոխութեան վերաբերմամբ և,—«Des Wetter» ամսագրի ասելով,—նրանցով նախագուշակում են բարոմետրից ոչ պակաս։

Եթէ մեղուներն իրենց փեթակից դուրս չեն գալիս, թէև օրը պարզ լինի, ուրեմն պէտք է սպասել, որ անձրև կըգայ։ Այն դէպքերում, երբ մեղուներն ամբողջ պարերով շտապում են վերադառնալ և իրենց փեթակները մտնել,—դա ամենաճիշտ նշանն է, որ փոթորիկ է լինելու։

Ընդհակառակը, երբ մեղուները դուրս են թռչում առաւօտեան և ապա դիմում են զանազան կողմեր, չնայելով ամպամած երկնքին, պէտքէ օրուայ ընթացքում սպասել եղանակի պարզուելուն։ Գրեթէ ոչ մի օրինակ չի պատահել, ինչպէս հաւատացնում է գերմանական ամսագիրը, որ այսպիսի դէպքերում արևը չըցրէր ամպերը և կէսօրից յետոյ—կամ աւելի առաջ—պարզ օր չլինի։

Մեղուների մթնոլորտային փոփոխութեանց նախագուշակութիւնն աւելի առաջ է գնում. եթէ նոյն ամսագրին հաւատ ընծայենք, մեղուներն աշնանային առաջին օրերին իսկ նախագգում են, թէ այդ տարուայ ձմեռն ինչպէս է լինելու — խի՞ստ թէ մեղմ։ Առաջին դէպքում մեղուները խիտ կերպով մեղրամոմով ծեփում են փեթակի թռանցքը, թողնելով միայն խիստ փոքր և հազիւ նկատելի անցք։ Եթէ ձմեռը մեղմ է լինելու, այն ժամանակ նրանք ոչ մի նախազգուշական միջոցների չեն ձեռնարկում և թռանցքըն էլ բոլորովին բաց են թողնում։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՊՈՏՍԴԱՄ. — Սեպտ. 29-ին, ժամը 11-ին երեկոյեան կայսերական զոյգը ուղևորուեց Կամենից (Վենետիկ, Պոլիս, Երուսաղէմ այցելելու համար)։

ՆԻՒ-ԵՈՐԿ.—Ամերիկացիներն սկսեցին տիրանալ Կուբային՝ գրաւելով Մազանիլօն, բարձրացրին ամերիկական դրօշակը։ Քաղաքի վարչութիւնը, հակառակ սպանիացիների բողոքին, յանձնուած է ամերիկացիներին։ Ամերիկացիներն յայտնեցին, որ առ 1 դեկտեմբերի ամբողջովին պէտք է տիրանան Կուբային, իսկ Պորտո-Ռիկոյին՝ հոկտ. 18-ին։

Կ. ՊՈԼԻՍ. — Չորս պետութիւնների դեսպաններն ստացան Բ. Դռնից իրենց կողմից խմբովին տուած յայտագրի պատասխանը։ Բ. Դուռն ընդունում է իրենից արած պահանջները և մի քանի ցանկութիւնները է յայտնում։

Կ. ՊՈԼԻՍ.—Բ. Դուռը Կրետէ հրաման է ուղարկել թրքական զօրքերը յետս կոչելու մասին։ Կրետէից հաղորդում են, որ ծովակալ Պոտիէն թիւրքերի առաջնորդ մարդկանց իւր մօտ կոչելով ծանուցել է թրքական զօրքերի կղզուց հեռացնելու մասին կարգադրութիւնը և ընդ նմին յայտարարել, որ տէրութիւնները կապահովեցնեն թիւրքերի կացութիւնը, բայց կըզրկուին պաշտպանութիւնից, եթէ թիւրքերը յարձակուելու լինին միջազգային զօրքի վրայ կամ եթէ ուրիշ բռնութիւններ կատարեն։ Զատ մահմեդականներ մտադիր են գաղթելու Կրետէից։

Կ. ՊՈԼԻՍ. — Օսման Նուրի փաշա և Սաբիք փաշա զօրապետները հրաման են ստացել ուղևորուելու Կրետէ՝ զօրքը յետ դարձնելու պատրաստութիւնները տեսնելու համար։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

ՄՈՍԿՈՒԱ, պ. Իւրի Վեսելովսկուն.— Ստացանք Ձեր «Գրիբոեդով և հայերը» յօդուածը, կըհրատարակենք։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՌԱԶՄԱՎԻՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ

1898 թ. մայիսի 1-ից մինչև 1898 թ. նոյեմ. 1

Թիֆլիսից I-ին հինգ տեղ ունեցող կառքը մեկնում է առ. 9 ժ. 30 ր. գիշերում է Մլեթում և հասնում է Վլադիկավկազ միւս օրը եր. 7 ժ. 20 ր.։ II-ը մեկնում է առաւօտեան 11 ժամին և գիշերում է Պասանաուրում. հասնում է Վլադիկավկազ միւս օրը եր. 9 ժ. 20 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառքը (առանց գիշերելու) մեկնում է օրուայ 2 ժ. 30 ր. և հասնում է Վլադիկավկազ միւս օրը եր. 4 ժ. 35 ր. II-ը մեկնում է եր. 9 ժ., առանց գիշերելու, հասնում է Վլադիկավկազ միւս օր եր 11 ժ. 20 ր.։

Վլադիկավկազից հինգ տեղ ունեցող I կառքը մեկնում է առ. 7 ժ. գիշերում է Մլեթում և հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 6 ժ. 30 ր.։ II-ը մեկնում է առ. 9. 30 ր. գիշերում է Գուդաուրում և հասնում է Թիֆլիս միւս օրը 7 ժ. 55 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառք (առանց գիշերելու) մեկնում է եր. 5 ժ. 30 ր. և հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 7 ժ. 25 ր.։ II-ը մեկնում է եր. 9 ժ. և առանց գիշերելու հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 10 ժ. 55 ր.։

—

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ

(Սոլոլակ, Սադովայա փողոց, № 64)

(սեպհական տուն)

Հեռախօս № 230

Երթևեկ հիւանդների ընդհանուր ընդունելութիւնն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամը 2—4-ը ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ, մասնաւոր ընդունելութիւն՝ ամենայն օր՝ ժամը 8—10 առաւօտեան—վճարը 2 ր.։ Գիշերօթիկ հիւանդներ և ծննդաբեր կանայք ընդունւում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը որոշւում է ըստ դասակարգերի։ Չունևորները ձրի են։ Գինեկոլոգիայի բաժանմունք ընդունողները վճարում են 1 ր. 50 կ. մինչև 8 ր. մի օրուգիշերուայ համար. Ծննդաբերական բաժանմունքը մտնողները—1 ր. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար։ Երկունքից ազատելը 10 ր. մինչև 50 ր.։ Անդամահատութիւնը ըստ համաձայնութեան։ Երթևեկ բոլոր հիւանդները դեղեր և նիւթեր ստանում են ընդունելութեան ժամանակ ձրի։ Չունևորների համար 1-ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորւում են նրանք տեսչի և նրա պ. պ. ընկերների առաջարկութեամբ ձրի։

Հիւանդանոցի տէր և տեսուչ

Մ. ՄԿՐՏՉԵԱՆ.

—

ԴՈԿ. Գ. Ս. ՀԵՐՑՖԷԼԴ

որ իւր մասնագիտութիւնը պարապել է Վիեննայում, ընդունում է կաշուի, վեներական, միզական և սիֆիլիտիկական հիւանդութիւններ ունեցողներին՝ ամեն օր առաւօտեան 9—11 ժամը և երեկոյեան 5—8 ժ.։ *Մադերեան փողոց*, № 5, *Լիսիցեանի տուն*։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը № 1 Բագուից Թիֆլիս մեկնում է օրուայ 4 ժ. 50 ր. հասնում է Թիֆլիս առ. 8 ժ. 26 ր., մեկնում է Թիֆլիսից Բաթում առ. 9 ժ. 10 ր., հասնում է Բաթում եր. 8 9. 47 ր.

Փոստային գնացքը № 3 Բագուից, Թիֆլիս մեկնում է գիշ. 12 ժ. 20 ր., հասնում է Թիֆլիս եր. 6 ժ. 33 ր., մեկնում է Թիֆլիսից Բաթում եր. 7 ժ. 48 ր., հասնում է Բաթում առ. 8 ժ. 33 ր.:

Մարդատար գնացքը № 2 մեկնում է Բաթումից Թիֆլիս առ. 8. ժ. 20 ր, հասնում է Թիֆլիս եր. 8 ժ. 22 ր., մեկնում է Թիֆլիսից Բագու եր. 9 ժ. 05 ր., հասնում է Բագու օրուայ 3 ժամին:

Փոստային գնացքը № 4 մեկնում է Բաթումից Թիֆլիս եր. 8 ժ. 35 ր., հասնում է Թիֆլիս առ. 9 ժ. 07 ր., մեկնում է Թիֆլիսից Բագու առ. 10 ժ. 57 ր., հասնում է Բագու առ. 5 ժ. 45 րոպէին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաջիկայ կիրակի օրը, հոկտեմբերի 4-ին, ս. պատարագից յետոյ, Վանքի աւագ եկեղեցու բարեպաշտ ծխականները երկրորդ անգամ հրաւիրւում են յիշեալ եկեղեցին՝ տեսնելու նոյն եկեղեցու ԵՐԷՑՓՈԽԻ ՀԱՇԻՒՆԵՐՆ և ՆՈՐ ԵՐԷՑՓՈԽ ընտրելու: Միաբանութեան կողմից ծխականներին առանձին հրաւիրաթերթեր չեն ուղարկուիլ:

Գործակալ ա. մ. եկ. հ. Թիֆլիսի՝
Զաքարիա քահ. Զարգարեանց.

(1103) 2—2

ՄՈՍԿՈՒԱՅԻ Ռ. ԿԵՕԼԵՐ ԵՒ ԸՆԿ.
ԳՈՐԾԱՐԱՆԻ
քիմիապէս մաքուր և բարձր որակութեան
ՍԵՂԱՆԻ ԱՂ:
(Столовая соль)
Ծախւում կայ
ԱՄԵՆ ՏԵՂ ԲՈԼՈՐ աւելի նշանաւոր վաճառականների մօտ:
Այս աղի աղամանի մէջ կոշտեր չի կազմում:
(М) 14 3—3

ԳՐԻՄՈ և ԸՆԿ. ՍՐՍԿՈՒՄՆ
ՄԱՏԻԿՕՅԻՑ



Պատրաստուած է բացառապէս մատիկոյի (Պերուվիանի բոյս) տերևներից:
ԴԵՊՈՆ ՊԱՐԻԶՈՒՄ
Դեղագործներ ԳՐԻՄՈ և ԸՆԿ.
8, Rue Vivienne.
— և դեղատներում —
(М.) 20006 17—13

Լոյս տեսաւ
ԼԵՒՈՆ ԽԱՆ-ԱՂԵԱՆԻ
ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ
ԵՒ
ՄԵՔԵՆԱՆԵՐ
բացատրական բառարանով և 250 նկարով:
Հրատարակութիւն Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերութեան.
ԳԻՆԸ 50 ԿՈՊԷԿ:
Դիմել՝ Тифлисъ, Общество изданія армянскихъ книгъ.
(1004) 50—47

Լոյս տեսաւ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱԼԽԱՍԵԱՆԻ
,,ՀՕՐՈՏ-ՄՕՐՈՏ‘‘
(պատկերներ իրական կեանքից)
ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ:
ԳԻՆՆ Է 30 Կ.:
Դիմել Կենդրոնական և Կովկասեան գրավաճառանոցները և իրեն հեղինակին: 10—9

ԱՄԵՆԱՅԱՅՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ

ՌՈՅԵԱԼՆԵՐ



ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

Ֆիսհարմոնիումներ, ջութակներ կիթառներ, ֆլէյտներ, կլարնետներ, ձայնախագեր, լարեր և այլն և այլն



Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս առ մաս.
ՆՈՐ-ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆԵՐՆ
ՈՒՂԱՐԿՒՈՒՄ ԵՆ ՁՐԻ
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱԶԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ
ԴԵՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
МУЗЫКАЛЬНОЕ ДЕПО
В. М. МИРИМАНЯНЪ
ТИФЛИСЪ, ДВОРЦОВАЯ УЛ.
36—13

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Լոյս տեսաւ
ՄԱՐԴ ԵՄ
(HOMO SUM)
ՎԷՊ
Գերմաներէն բնագրից թարգմանեց
ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ
428 երես, ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ
Դիմել՝ Армянское Издательское Общество въ Тифлисѣ.
(1067) 50—22

„Грѣхи Молодости“
ПОУЧИТЕЛЬНОЕ СЛОВО КО ВСѢМЪ, РАЗСТРОИВШИМЪ СВОЮ НЕРВНУЮ СИСТЕМУ ОНАНИЗМОМЪ И РАСПУТСТВОМЪ.
Соч. Д-ра ЛОРЕНЦЪ.
Русское изданіе Д-ра Б—а.
цѣна 1 руб.
Эта полезная книга содержитъ множество совѣтовъ, какъ избавиться страдающимъ отъ вредныхъ послѣдствій вышеозначенныхъ пороковъ и возстановить разстроенныя силы и здоровье. Книга эта разрѣшена Москов. Цензурнымъ Комитетомъ.
Складъ изданія только у ОТТО АСПЕРГЕРА ВЪ ЛЕЙПЦИГѢ (Саксонія). Иногородные за почтов. пересылку не платятъ.
120397 (М.) 21 4

Le Bureau de coupures de la presse «Observer» à Vienne IX Türkenstrasse 17 à l'intention de rénnir en trois albums tous les nécrologues qui ont jparus dans tous les journaux du monde entier à l'occasion de la mort de Sa Majesté I. et R. l'Impératrice Elisabeth d'Autriche.

Ces albums sont déstinés a Sa Majesté l'Empereur François Joseph et. I. A. I. et. R. les Archiduchesses Gisela et Marie Valérie qui ont daigné de être les accepter en.

L'«Observer» s'adresse à tous les journaux avec la priére d'envoyer à son adresse «Observer» Vienne (Autriohe) IX Türkenstrasse 17 le plus tôt possible en trois exemplaires tout numéro contenant un nécrologue se rapportant à la mort de Sa. Majesté l'Impératrice Elisabeth· 3—3

Годъ второй ОТКРЫТА ПОДПИСКА Годъ второй
на 1899 годъ
на еженедѣльную литературно-политическую и научно-популярную газету
„РОССІЯ и АЗІЯ“
(Подписной годъ съ 1 Ноября 1898 г. по 1 Ноября 1899 г.)
Годовая цѣна безъ доставки **5 руб**, съ доставкой и пересылкой - **6 руб.**, заграницу **7 руб.**, за полгода безъ доставки **3 руб.**, съ доставкой и пересылкой **4 руб.**, заграницу — **5 руб.** Допускается разсрочка для годовыхъ подписчиковъ по 3 руб. въ два срока, или по 2 руб. въ три.
Адресъ Редакціи: **КІЕВЪ, Паньковская, д. № 12.**
Газета дастъ въ теченіе года: 1) 50 номеровъ литературно политической газеты; 2) 50 номеровъ „Научно-литературнаго отдѣла“, посвященнаго Востоку, еврейству, инородцамъ, **Кавказу**, Туркестану и Сибири и 3) 4 книги приложеній подъ названіемъ „Альманахъ Россіи и Азіи“, въ который войдутъ;
I. **Арменія.** Сборникъ статей различныхъ Русскихъ и иностранныхъ авторовъ объ Арменіи, ея исторіи, литературѣ и отрывки изъ произведеній Армянскихъ писателей.
II. **Спиноза.** Біографія и лучшія произведенія знаменитаго Еврейскаго философа пантеиста съ критическимъ комментаріемъ.
III. I. Томъ „Полнаго Собранія сочиненій“ знаменитаго романиста Георга Еберса, автора романовъ „Дочь Египетскаго царя“, „Императоръ“ и пр.
IV. **Моріеръ**, Мирза Хаджи Баба Исфагани. Новый переводъ съ англійскаго по порученію Редакціи. (Эта книга была переведена въ сороковыхъ годахъ Барономъ Брамбусомъ и представляетъ изъ себя романъ, состоящій изъ забавныхъ, юмористическихъ сценъ изъ жизни Востока вродѣ Жильблаза Лесажа).
Всѣ годовые подписчики „Россіи и Азіи“ за прошлый годъ будутъ получать изданіе цѣлый годъ **безплатно** Оставшіеся экземпляры „Россіи и Азіи“ за прошлый годъ новые подписчики могутъ получить за 3 руб.
Объявленія—10 коп. строка корпуса.
5—1 Редакторъ-издатель прив. доц. **А. Н. ГРЕНЪ.**

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ խնդրում է անդամներին՝ չնորհ բերել Ընկերութեան ԸՆԴՀԱՆՈՒՐ ժողովին, որ նշանակուած է հոկտեմբերի 4-ին, երեկոյեան ժամը 7-ին, կարուձևի դպրոցում (Դանովսկայա, № 25):

Ժողովի պարապմունքն է՝ փոխ-անդամների ընտրութիւնը:

(1104) 3—3

ԿԱՅՍՐՈՒՀԻ ՄԱՐԻԱ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎՆԱՅԻ

կոչերին խնամող հոգաբարձութեան Կովկասեան ճիւղի խորհուրդը յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ԹԻՖԼԻՍԻ ԿՈՅՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ (Ալէքսանդրովսկի փողոց, տուն № 3) ընդունւում են զորդերի կարկատանի, աթոռների նստատեղ հիւսելու, սակառների ու կողովների պատուէրներ: Պատուէրներն ընդունւում են ամեն օր, բացի տօն օրերից, օրուայ ժամը 1—2-ը և 4—5-ը և ժամանակին կըկատարեն՝ խիստ չափաւոր գներով: 3—1

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ
Լոյս է տեսել «**ԲՆԱՐԻԿ ՄԱՆԿԱԿԱՆ**» եւրոպական ձայնագրութեամբ, որ յարմարեցրած է դաշնամուրի վրայ նուագելու և երգելու համար: «Բնարիկը» պարունակում է իւր մէջ 27 հատ մանկական ընտիր երգեր, պարերգեր և աղօթքներ, որ Ս. Էջմիածնի նախկին ուսումնական ժողովի կողմից ընդունուած է ի շարս լաւագոյն դասագրքերի: Արտասահմանի հայ գաղութների խորին ուշադրութիւնն ենք հրաւիրում այս գիւրամատչելի եղանակով կազմուած երգարանի վրայ, որ վաճառւում է Թիֆլիսի «Կենդրոնական գրավաճառանոցում», պ. Յովհ. Սուգանաճեանի երաժշտ. մագազինում և ինձ մօտ: Ինչ գիմողները բացի մեծ զիջումից, նաև ճանապարհածախք չեն վճարում: Հատով՝ 1 ռ. 50 կոպ., 50 օր. 1 ռ. 20 կոպ., 100-ով գնողներին՝ 1 ռ.: Ցանկացողները պիտի դիմեն այս հասցէով՝ «Սիմֆերոպոլ — Ղազարոս քահ. Յովսէփեանց»: (1038) 50 - 45



ՆՈՐ ՈՍԿԻ
ամենաչքեղ. ամենադիմացկուն, ամենաճիշտ և խիստ էժան
!!! ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ !!!
Ռեմոնտուարը իսկական ծրնկի, կազմը խիստ չքեղ, Պարիզի իսկական էմալով, վրան ֆիգուրներ:
ԲԱՑ ժամացոյցն արժէ 6 ռուբ., ՓԱԿԸ՝ 7 ր. 50 կ.:
Ուղարկւում է փաթաթուած և մինչև բայէնքն ուղղուած, 5 տարուայ երաշխաւորութեամբ՝
ПАРИЖСКІЙ ЛУВРЪ
въ ВАРШАВѢ, Королевская, 51.
երկու ռուբլի կանխավճար ստանալուց յետոյ, մնացածը վերադիր վճարով:
ՆՈՐ ՈՍԿՈՒ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ ՊԱՐԻԶԻ ԻՍԿԱԿԱՆ ԷՄԱՅԼԻ ՖԻԳՈՒՐՆԵՐՈՎ:
(М.) 93848 10 - 9

Ա. Ի. ՊԵՏՐՈՎԻ
ՏՊԱՐԱՆԸ
(Թիֆլիս, Գոլովինսկի պրոսպեկտ, տուն № 12)
յայտարարում որ է, ստացուած են նոր բազմատեսակ տառեր, զանազան պոլիտիպաժներ հարսանիքների, երեկոյթների, հրաւիրաթղթերի. ճաշկերոյթների, խորտակացուցակների համար և այլն: Տպագրում է ամեն տեսակ բլանկներ և գրքեր արքունական և մասնաւոր հաստատութիւնների համար առևտրական գրքեր, հաշիւներ, ծրարների մակագրութիւններ և այլն, այլ և հաշտարար դատարանների համար կոչնագրեր տեղական բոլոր լեզուներով, արձանագրութիւններ, անգործագրերի մատեաններ և այլն: Բրոշիւրներ և գրքեր ռուսերէն, հայերէն, վրացերէն և օտար լեզուներով: Բացի դրանից տպարանում կան մեծ քանակութեամբ բազմազան տառեր աֆիշների, յայտարարութիւնների եւ ուրիշ ծանուցումների համար:
Ռուսերէն, հայերէն և վրացերէն այցետոմսեր սկսած 1 ռուբլուց 100 հատի համար գեղեցիկ թղթի վրայ:

Дозв. цензурою. Тифлисъ, октября 2 го дня, 1898 г. Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. проспектъ, домъ № 12 Телефонъ № 387,